

իցէ՞ արդեօք, զի նախանձելի օրինակիդ՝ նախանձաւոր լինիցի որ ի մեծագործ աստուածասէր արանց ի նոր տպագրութիւն Աստուածաշունչ Գրոց: Եւ գիտես՞ դու թէ քանի՞ ընտրելագոյն և հնագոյն գրչագիր օրինակք գտանին ի մատենադարանս Վանուց Սուրբ Յակովբեանց յերուսաղէմ և ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի:

Այլ զի կանխեցեր դու յայսմ արժանի ես, Հայր, պսակել զքո անուն և յիշատակ արձանագրելով ի ճակատ Համաբարբառին, զոր չկարեն եղծել զարք և ժամանակք:

Արժանի են նաեւ, զի ընդ քոյգ անուան ի շարս՝ գրեսցին և կարգասցին յիշատակք անուանց նոցա՝ որք զուգընթաց լինելով ընդ Մեկենասիդ բաժանորդակից լինել յօժարին, սատարելով ի մեծագոյն ծախս լայնածաւալ Գրոց Համաբարբառին:

Արեւմն քաջալերեօց, Հայր, զի դու զմի պատուական յիշատակ եղեր ի Սիօն, որ յետ մեռանելոյդ՝ անմահութեանդ կենդանի արձանագիրն է: Չիրմիդ տապանաւար՝ Աստուածաշունչ տառն է: Գերեզմանիդ օրհնիրգուք եկեղեցւոյ Մանկուռն են:

Եւ ես ասեմ՝ զհանն և կնքեմ զիմ բան. երանի, որ ունիցի յիշատակ ի Սիօն:

ՅՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ

1892 Օգոստոս 20
ՅԵՐՈՒՍԱԿՆՄ

Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն
Ի Վ Ե Ր Ա Յ
Հ Ա Մ Ա Բ Ա Ր Բ Ա Ռ Ի Ս Գ Ի Ռ Յ

Ի Վ Ա Վ Ն Ա Ռ Յ ժամանակաց ազգի ազգի հնարս հնարեցին սուրբ Հարք և աշակերտք բանին կենաց առ ի դիւրացուցանել զուսումն Ս. Գրոց և ի ջանքել մանկանց եկեղեցւոյ զկաթն երկնային շնորհաց, նախ՝ առ ի չքոյէ տպագրական արուեստի և գործեաց՝ մեծաւ խնամով և երկայնմտութեամբ ընդօրինակեալ բազմացուցանէին զօրինակս նորս և սիւնէին զնոսս ընդ ամենայն եկեղեցիս քրիստոնէից, Ապա ձեռն արկեալ թարգմանէին յայլ և յայլ բարբառս ի գիտութիւն և յօգուտ այլալեզու ազանց, և ի թարգմանութեանցս յայսցանէ չքնազագոյն օրինակ վարկանելի է մերս հայկական թարգմանութիւն, որ ի ձեռն շնորհակի և աստուածամերձ արանց կատարեցաւ: Յայս կարգէ են բազմահատոր մեկնութիւնք նախնեաց, որովք բացատրին գժուարիմաց բանք Գրոցն և գիւրանայ ըմբռնուած նոցին, և այնու առաւել եւս արծարծի ի սրտի ընթերցողին եռանդալից սէր ուսման նորին:

Զայս ամենայն աւնէին նախնիք նախ քան զգիւտ տպագրական արուեստին, յորժամ ընդօրինակութիւն միոյ և եթ մատենի բազում ծախիւք և անբաւ նեղութեամբ ի կատար հասանէր, Սմին իսկ իրի երկք նոցուն առաւել եւս գովելի և շահաւէտ են քան զբազմացն ի նորագունից. քանզի նոքս ի ստիպմանէ պարագայից—թող զգերագոյն ոգին և զջերմագոյն հաւատս, որ ի նոսս տիրէր—բազումս բազում անգամ վերծանէին և առաւել եւս ի խորս սրտից իւրեանց խեղճուտ լինէին, այլ սուղ ինչ ի գիր արկանէին ի պէտս այլոց ժամանակացած և առ յապա եկելոց, Իսկ դիւրութիւն գրչութեան և տպագրութեան այժմեան ժամանակիս ընդ բազում օգտաշատ և պատուական դրուածս ոչ սակաւ անպէտս և խոտանս ի հանդէս ածէ:

Ի վախճան խաւարեալ զարու պատմութեան աշխարհի յորժամ վերստին սկսան ծաղկել գիտութիւնք և արուեստք, ծաղկեցաւ և աստուածարանական գիտութիւն, զհոգեշնորհ երկս նախնի վարդապետաց ի բազմադարեան բանտարգելութենէ ցեցալից անկեանց զերծուցեալ՝ ի լոյս ընծայեցին արք ուսումնականք և բանիրուք. և հիացեալ ի վերայ ճարտարութեան և իմաստութեան նախնի հեղինակացն՝ ինքեանք հետևողք եղնն ոճոյ և ուղղութեան նոցին՝ յաւելլով զոր ինչ միանգամ ի յառաջագիմութենէ ժամանակին և ինքնարոյս հանձարովն իւրեանց տեղեկացեալ էին, Զերբայական և զհելլենական սկզբնալեզուս ուսեալ՝ հետադասութեամբ քննէին զբանս Ս. Գրոց, յորինէին մեկնութիւնս ի վերայ նոցա, կազմէին բառագիրս, քերականութիւնս և այլ բազում հնարս ի նպաստ և ի սատարութիւն ուսման աստուածային Գրոցն:

Մին ի սատարիչ գիտութեանցս յայսցանէ է ՀԱՄԱԲԱՐԲԱՌՆ, յորում ամփոփեալ զամենին նման բառաբոց ըստ կարգի ալփաբետաց՝ ամենայն բառք որք յԱստուածաշունչ Գիրս ի կիր արկեալ իցնն հանդերձ յիշատակութեամբ տեղւոյ և շարաբանութեան, յորում գտանիցին բառքդ, 2/րդ ինչ տարակոյս զպիտանութենէ այսպիսի գործոյ, որ կարի իմն սատարէ ուսանողին եւ դիւրացուցանէ զուսումն աստուածատուր մատենին, Քանզի եթէ ընտիր ցանկք ի վերայ հասարակ աշխարհիկ կամ նուազ կարեւոր գրուածոց ունիցին զիւրեանց յարգ և պիտանութիւն, որքան առաւել պիտանի և օգտակար վարկանելի է այսպիսի ցանկ մի ի վերայ Ս. Մատենին որ գեր ի վերոյ է քան զամենայն գովութիւն, զի նա է միմիայն կանոն հաւատոյ և կենցաղաւարութեան մարդկան եւ առաջնորդ ի ճանապարհի յախտնական կենաց ի ձեռն Միանի Որդւոյն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի:

Զպիտանութենէ և զկիրաութենէ Համարարառիս խօսեցուցք զինի Իօկ այժմ ճահաւոր թուի սուղ բանիւք պատմել թէ ո՞չք եղեն առաջին Տրնարիւք Համարարառիս որպիսի ինչ էր կազմութիւն նախկին երկոց նոցին և ցուցանել զզարգացումն նորին մինչև ի մեր ժամանակս և ի ներկայ դարձս: — Ի մէջ երեքտասաներորդ դարու ՀՈՂԾ անուամբ Գոմինիկեան կրօնաւոր զառաջինն յորինեաց Համարարառ ի վերայ լատին Աստուածաշնչի: Զայս կէտ նպատակի առաջի ունեւոյ՝ բաղում ամս ծախեաց ի յաճարն ընթերցմունս և ի տքնաջան ուսումն Ս. Գրոց: Պատմի թէ առ ի յաջողութեամբ ի կատար հասուցանել զայսպիսի հսկայ երկէտ օժանդակս իւր իրբէ հինգհարիւր փանականս ի միարանութենէ իւրմէ: և յետ երկարամեայ աշխատութեան հաղի. հաղ մարթացաւ յորինել բովանդակ ցանկ ամենայն փոփոխական մասանց բանի, նշանակեալ առնթեր թէ յորում գիրս և յորում տեղւոյ գտանի իւրաքանչիւր բառ: Գիտելի է զի յորինումն առաջին Համարարառի բաղում՝ զժուրութեամբը շրջապատեալ էր և կարի յոյժ տքնութեանց և ջանից պէտս ունէր քան զոր յապա ժամանակի պահանջէր: Բայն զի ներկայ գլխակարգութիւն և բաժանումն ի տունս բողոքովին պակասեր Աստուածաշունչ Գրոց օրինակաց այնր ժամանակի և հարկ լինէր այլ և այլ ինքնահար նշանօք որոշել զտեղիսն և բաղում անգամ՝ ծայրէ ի ծայր վերծանելով՝ ուղղել զվերկական լրացուցանել: Աստին Համարարառս այս յետ այնորիկ վերստին տպագրուցաւ այլ և այլ փոփոխմամբ և բարւոքմամբ մինչև յամի 1555 ներկայ կատարելութեամբ իւրով ի լոյս ընծայեցաւ ձեռամբ համբաւաւոր հրատարակչի Պոլեքտայ Ստեփաննոսի որ եղև իսկ հեղինակ բաժանման Ս. Գրոց ի գլուխս և ի տունս և արդէն այնու բաժանմամբ հնգօք ամօք յառաջ զլատին Աստուածաշունչն ամրողջ տպագրեալ էր: Բաժանումն այս ընդունելի եղև ամենեցուն գիտնոց ժամանակին և ընդհանրացաւ առ ամենայն եւրօպական ազգս մինչև յետ այնորիկ առանց Ստեփանեան գլխակարգութեանդ և անատութեան շարպագրել ուրեք զՍ. Գիրս: Ըստ այսմ՝ օրինակի եղև տպագրութիւն առաջին հայկական Աստուածաշնչի ձեռամբ Ասկան վարդապետին որ լքեալ զնախնի և զյարմարագոյն գլխակարգութիւն հին գրչագրաց մերոց՝ զլատինական փոխ կառս որ բաղում ուրեք հակառակ մտաց և շարքանութեանն բաժանէ և միայն զգիրութեան և զհաւասար բաղմամանն բաժանման նպատակ առաջի ունի:

Աստին Համարարառիս յաջորդեցին Համարարառք Հին Կտակարանի և եթ ի վերայ երբա-

յական սկզբնագրի և ի վերայ յունական Եօթանանից թարգմանութեան ի պէտս դարաց լեզուացդ այդոցիկ և առանձինն ի վերայ նոր Կտակարանի ի գիրութիւն ուսումնասիրաց յոյն բնագրի նոր կրտակին: Այսորիկ ևս բաղում՝ փոփոխութեամբ և բարւոքմամբ ոչ սակաւ անգամ տպագրութեամբ ի լոյս ընծայեցան նոյնպէս և յընթացս ժամանակի յայլ և այլ նորագոյն լեզուս եւրոպականս փոխարեւել առաւել կամ նուազ ձոնութեամբ և կատարելութեամբ հրատարակեցան գաղղիերէն, անգղիերէն, գերմաներէն, հոլանդերէն, և այլն: յորոց գերահաւան համարեցի թերեւս լիակատար Համարարառ Աղէքսանդր Բրուզնայ յանգղիական լեզուս յորում հանդէպ իւրաքանչիւր բառի յաւելեալ է նաեւ համառօտ նշանակութիւն նորին հանդերձ կարեւոր ծանօթութեամբք ի տեղիս:

Նուսկ յետոյ զայ մերս հայկական Համարարառ: նախ յամի 1848 ել ի տպարանէ Կուլիէլմոս Կրիֆֆիթի Զմիւռնիոյ Համարարառ կամ ցանկ նմանաձայն բառից նորոյ Կտակարանի այբբենական կարգաւ շարադասեալ՝ առանց յառաջարանի իրիք կամ անուան հեղինակի: նոյնպէս յայսմ անանուն գրութեան թուի զառաջինն Համարարառ բառը ի կիր արկեալ յայս միտս որ ճիշդ թարգմանութիւն է եւրոպական concordentia բառի: Առ նախնիս բառը այդ գտանի նշանակութեամբ համաձայնութեան չորից Աւետարանացն որպէս հանրածա նօթ Համարարառն Սրբոյն Եփրեմի: Սակ հեղինակութեանց ի ծանօթից հաւաստի և կարի իսկ հաւանական թուի թէ և նոր Կտակարանի առաջին հայկական Համարարառս այս յորինեցաւ ձեռամբ միոյ ի միարանից Ս. Աթոռոյս Երուսաղէմի որպէս տեսցի ի յետագայդ:—Ենթացս տպագրութեան մատենիս յանօթս շնորհեցաւ մեզ յազգային Մատենադարանէ Կ. Պոլսի ստուար երկհատոր ձեռագիր ցանկ ամենայն բառից Ս. Գրոց: Գիր գրչագրիս է նոր կոչեցեալն: յոյժ մանր այլ յստակ և գեղեցիկ գրեալ ի վերայ հաստ և կարծր բամբակեայ թղթոյ: 2իք ինչ ուրեք ի նմին յառաջարան կամ վերջարան կամ յիշատակարան և ոչ իսկ անուն գրուածոյն կամ հեղինակին գտանի ի ծակատի կամ այլուր ի գիրս: այլ միայն ի յետ կոյս կազմի իւրաքանչիւր հատորոյ օսկեղրով գրոշմեալ է «Բարաստան խնկոց»: Ի մասին օժոյ և զաստուարութեան տարբերի ոչ սակաւ ի ներկայ գրուածոյս: Յայտնի տեսանի ի նմա աշխատութիւն եօթն կամ ութ անձանց զի թէպէտ ևս ըստ կարգի իմն այբուրենից զաստուարեալ է բովանդակն, այլ որպէս ասացաւ տարբերի ոչ սակաւ յուղղութենէ ներկայ երկոյս:

Աւանդութեամբ ծանօթ էր ոմանց Միարանաց Ս. Աթոռոյս և այլոց եւս արտաքնաց թէ ի հնումն ոմնն ի վարդապետաց մերոց յերիւրեալ էր այսպիսի ցանկ մի, այլ յանհոգութենէ կամ ի վատութենէ պահապանին կորուսեալ կամ գողացեալ էր գործն ի վանաց աստի: Ի տեսանել մեր «Զբուրաստան խնկոց» կասկած յարեաւ ի մեզ թէ մի գուցէ զայսմանէ իսկ լինիցի վերասացեալ աւանգութիւնդ, և ի խոյզ և խնդիր լեալ ի թուղթս Պատրիարքական պահարանի՝ դառք տեղեկագիր դատաւարութեան խնդրոյ իրիք սակս Սրբոց Տեղեաց՝ ընտիր հայկաբանութեամբ շարագրեալ, որպէս եւ այլ ձեռագիր յիշատակարանք նովին մանր նոտրագրով որպէս վերոյիշեալ «Բուրաստանդ խնկոց» ընդ որում այնպիսի նմանութիւն բերէ որպէս բնական է տեսանել յերկուս գրութիւնս առն միոջ յորոց շարագրութիւն առաջնոյն չորիւք կամ հնգօք ամօք կանխեալ իցէ քան զերկրորդինն: Ի վախճան տեղեկագրին եղեալ ստորագրութիւն Գիոնէսիոս վարդապետի Աւագ—Թարգմանի Ս. Աթոռոյս այնր ժամանակի: Յայտնի է ի տարեգրութեանց Ս. Աթոռոյս զի Գիոնէսիոս վարդապետս, ապա եպիսկոպոսացեալ, և ընկեր իւր Յակոբ վարդապետս երկրորդն արք բանկրունք և ուսումնասէրք՝ յաղագս անհամաձայնութեան իրիք թողեալ գնացին աստի տանելով ընդ իւրեանս զգրեանս և զթուղթս իւրեանց, Կարի հաւանական թուի թէ վերոյիշեալ ցանկդ, զոր համարիմք լինել նոյն ընդ «Բուրաստանիս խնկոց», չուեսց աստի ընդ Հօրն Գիոնեսեայ, կամ յետոյ գողացեալ անցաւ ի ձեռս այլոց և ի վերջոյ եղև որպէս և է այժմ սեփականութիւն Ազգային Մատենադարանի, նոյնպէս հաւանական թուի, և ի ներքին վկայութեանց իսկ փոքր ի շատէ ստուգի թէ ի ցանկէ աստի յայսմանէ քաղեալ է Համարաբան գրարաւ նոր Կտակարանի որ ըստ գաղափարի եւրոպական Համարաբանաց զասուորեալ և աւուանեալ՝ ուրոյն հրատարակեցաւ: սակայն իրօք աշխատութիւն վարկանելի է Գիոնէսիոսի վարդապետի, Յանկալի է մեզ զստուգագոյնս տեղեկանալ զայսմանէ ի հաստատութիւն կամ յուղղութիւն կարծեաց մերոց:

Յետ ամաց ինչ այլ ոմն ի Միարանութենէս՝ Արժ. Տ. Թագէտս Ա. Աստուածատուրեան Արապկերցի, յղացաւ զգաղափար հսկայ մատենիս այսորիկ, և ձեռն արկեալ, տքնաջան աշխատութեամբ, ոչինչ նուազ քան զհօրն Համարաբանին զմեծին Հուգոյի դոմինիկեան կրօնաւորի, զեօթն ամս ողջոյն սմա նուիրեալ՝ ի կատար հասոյց, Պատմեն ականատես Միարանք թէ որպիսի տքնութեամբ զօրն ի բուն զվկայութիւնսն հաւաքէր եւ իւրաքանչիւր

բառ ի վերայ առանձին թղթի արձանագրէր և զուրուրէքն և զշարարանութիւնն առննթեր նշանակէր և ի գիշերի յաճախ ընթերցմամբ զպակաս լրացուցանէր: ապա զթերթիկսն ուրոյն կարգադրեալ ի բազմաթիւ քսակս զեակեղեալ՝ պահէր առանձինն: Ի լրանալ հաւաքման բառից և վկայութեանց՝ կարգաւ բացեալ զքսակսն վերստին ընդօրինակէր ըստ կարգի հայ ալփարետաց: և հօսկ յետոյ զբովանկարակն, որպէս տեսանի ի տպագրութեանս ի տեարակրս տետրակս ընդօրինակէր: Ասի թէ յետ այսքան տառապանաց երկու անգամ եւս զբովանդակն վերստին քննեաց և անձանձիր ընթերցմամբ Ս. Գրոց բազում ինչ փոփոխեաց և յաւել որ ինչ յառաջնում նուագի վրիպեալ էր յուշագրութենէ իւրմէ:

Խոստացաք ի վերոյ տակ ինչ և զպիտանութենէն մատենիս:— Աստուածաշունչն է, որպէս անուն իսկ յայտ առնէ, Շունչ կամ Բան Աստուծոյ, յորում բովանդակեալ ամփոփին յայտնութիւնք ասուած եղէք առ մարդիկ, Յամենայն պանց մտորելոց ընտրեաց Աստուած զիսրայելեանն ազգ, եւ բազում օրինակօք հոգացաւ կրթել զնա և առաջնորդել ի շաւիղս արգարութեան ինամարկութեամբ նահապետաց, քարոզութեամբ մարգարէից եւ ալգի ազգի իմաստնովք: Ի զթեւ նոցա յաստուածագիր օրինացն, երբեմն խրատուք, երբեմն սպառնալիք եւ երբեմն շարաշար պատուհասի վերստին անէր զնոսա յուղղութիւն և ի ճանապարհս առաքինութեան: Ընդ պարագայս դարուց հոլովից որ ինչ անցք անցին ընդ ազգդ ընտրեալ, որ ինչ բանք հոգեշունչք խօսեցան առ նոսա բերանօք մարգարէից, և որ ինչ խրատական և բարեպաշտական ձառք յօրինեցան յաստուածասէր արանց այնց ժամանակաց՝ այս ամենայն առանց ժամանակագրական կամ պատմական կարգի ի զիր արձանացուցեալ պահեցան, նոյնպէս և ի նոր Կտակարանի յայտնութիւնք նորոյ տնօրէնութեանն ըստ նմին օրինակի շարակարգեցան: Սակայն յայսմ ամենայնի պակասի պատմական և ամփոփ կատարելութիւն որ տեսանելի է յերկս միոյ և եթ հեղինակի, Բազում ուրիք ի Ս. Գիրս պատմութիւն, մարգարէութիւն, աղօթք, խրատք, առակք, խառնխտուռն ի միասին եղեալ գտանին: յաճախ մասն մի պատմութեան իւրիք ի միում տեղւոյ եղեալ՝ մնացեալ մասն կամ մասունքն այլուր գտանին՝ երբեմն ամփոփ և երբեմն սփռեալ յայլ և այլ գիրս: կամ ի միում տեղւոյ պատմեալ զիպաց ակնարկութիւնք և յայլ գիրքս և զլուսն գտանին, որ մեծամեծ օգուտս ընծայեն ի լուսարանութիւն գիպացն եղելոց, և այսու մին զպակաս միւսոյն լրացուցանէ: Այլ քանզի միտք մարդոյ ոչ են բաւական զայս ամենայն և ոչ իսկ

զստի տեղիս ակնարկութեան ի մի ունել և ըմբռնել՝ Համարարաւոն գայ յօգնութիւն և առաջնորդէ մեզ միով տեսութեամբ զամենայն զգիր և ցան ակնարկութիւնս ի Ս. Գիրս ակն յանդիման տեսանելի զայլ և այլ պարագայս յայտնութեանց և զհաճոյական կամսն Աստուծոյ ճոխագոյն օրինակօք առաջի առնէ և մեծապէս ձեռնտու լինի մեզ բաղդատական քննութեամբ իմանալ զտոյրզն՝ ճանաչել զբարին եւ զչարն:

Գարձեալ Աստուածաշունչն իբրև հնազարեան գիրք ի հին լեզու և յոճ հին ազգի շարագրեալ՝ յոյժ կարօտի բացատրութեան խօսից և դարձուածոց: Եւծապէս դիրքանայ գործ մեկնողին և ըմբռնումն այսգունակ խրթնութեանց՝ յորժամ ունիցի նա ի ձեռին միջոց բաղդատելոյ զխօսք և զգարձուածոք ընդ այլ բազում նոյնպիսի բանս յայլ և այլ մասունս Ս. Գրոց ի կիր արկեալս: Ի մատենագրութիւնս նախին Ս. Հարց բազում այն է զի զբժուարիմաց բանք բացատրին վկայութեամբ նոյնպիսի բանից և բառից յայլ գիրս կամ յայլ իմն շարաբանութեան, որոց իմաստն ակներեւ յայտնի լինիցի: Օրինակի վասն Ս. Ոսկերբան ի մեկնութեան Մատթէի ի բացատրութեան տանս: «Ոչ գիտեր զնա մինչև ծնաւ զԱրդին իւր զանգրանիկ՝ այսպէս գըրէ:—Մինչև և սակաւ աստ, ոչ զի կարծիցես եթէ յետ այնորիկ գիտաց զնա, այլ զի ուսանիցես եթէ յառաջ քան զծնունդն և յետ ծննդեան յամենայն կարծեաց անարատ էր: Եւ ընդէր, ասեն, բնաւ զմինչև եզ ի միջի, Ասեմք, եթէ սովորութիւն է գրոց զբանս զայս ասել բազում անգամ, և ոչ իբրև սահմանեալ իրաց ժամանակ ինչ զնել: Զի եւ առ տապանան ասէ եթէ՝ Ել ագաւն եւ անգրէն ոչ դարձաւ, մինչև ցամաքեցաւ երկիր, և յայտ է՝ Թէ ոչ յետ ցամաքելոյն դարձաւ անգրէն, եւ զԱստուծոյ ճառեալ ասն գիրք եթէ Յաւիտենից մինչև յաւիտեան դու ես, ոչ եթէ սահմանս ինչ զնէ անդ, եւ դարձեալ տայ աւետիս, եթէ Ծագեցէ յաւուրս նորա արդարութիւն՝ և բազում խաղաղութիւն, մինչև բարձրի լուսին, եւ այսու ոչ եթէ կատարած ինչ տայ բարութեանցն, այլ հանապազօրք հաստատութիւնս:—Սմին նման առնեն Ս. Ոսկերբան և նախին մեկնարանք և յայլ ամենայն տեղիս մեկնութեանց իւրեանց ուր ուրք կարող լինին մտաբերել զնոյն օրինակ վկայութիւնսն: Սակայն որքան առաւել սատարեցին մեկնարանք և ուսումնասէրք յորժամ մարթացի նոցա միով ակնարկութեամբ առաջի աչաց ունել զամենայն նոյնաձայն բառս որ ընդ ամենայն մասունս Ս. Գրոց սըփրեալ են՝ ի մի պատկեր հաւաքեալ, չհանգրձ շարաբանութեամբ նոցին՝ վկայութեամբ զլիոց և

տանց, Ըստ նմին օրինակի ոչ սակաւ բաղդանչիւն ինդիրք ի պատմական և ի մարգարէական մասունս այսու բաղդատական օրինօք գտցեն զուծմունս իւրեանց, Արդ զայս սատարիչ պաշտօն մատուցանէ մեզ Համարարաւոն, որ պարտի լինել մին ի պիտանեզոյն օժանդակ մատենից անձնիւր աշակերտի աստուածային Գրոյն:

Ամենայն վարդապետութիւնք քրիստոնէական կրօնիս առեալ լինին ի Ս. Գրոց, որ է մի միայն արժանահաւատ առաջնորդ յաւիտենական կենաց և յայտնող աստուածային կամացն առ մարդիկ: Փրկիչն մեր զնոր տնօրէնութիւն իւր իբրև լրումն և կատարելութիւն հնոյն քարոզէր ասելով «Ոչ եկի լուծանել զօրէնսն, այլ լնուլ», և Առաքեալք նորին և աշակերտք յամենայն զարս զնոյն քարոզեցին տիեզերաց, ոչինչ ապախտ արարեալ զհինն՝ յաւեա զկենդանի ոգի նորուն առեալ սեփականեցին քան զհնոյն զգիրն անկենդան, Սմին իրի ի քարոզութիւնս իւրեանց ստեպ զհին օրէնսն յիշատակեալ զնորսն նորօք ցուցանէին, զամենայն փրկագործ տնօրէնութիւնսն Քրիստոսի կանխասացութեամբ նախկին մարգարէից հաստատէին, ամենայն վարդապետութիւնս իւրեանց ի մասին հաւատոյ համաձայն հռչակէին ընդ կամս և ընդ պատգամս Աստուծոյ, որք յընթացս ժամանակի յայտնեցան նահապետաց և աստուածամբձ որերոյ, այնպէս զի գրեա թէ յամենայն էջս նոր Ատակարանի մարթ է գտանել ակնարկութիւնս ի հին և վկայութիւն սորա ի հաստատութիւն առաջնոյն, նմանապէս և Ս. Հարք Եկեղեցւոյ ոչ այլ ինչ ծանեան իբրև աղբիւր աստուածային յայտնութեանց, բոց եթէ զԱստուածաշունչ զգիրս հին և նոր Ատակարանաց և զհաստատեալսն Առաքելոց անտի զվարդապետութիւնս ընկալեալ, ապա զոր ինչ պէտս ունէին յաւելոյ և ընդարձակելոյ կամ պարզարանելոյ՝ ըստ առաքելական օրինակի երկայնամիտ ուսումնասիրութեամբ հին և նոր Ատակարանաց հաստատէին, Թէպէտ և ամենայն դաւանութիւնք հաւատոյ և որ ինչ պիտոյ է ամենայն մարդոյ առ ի փրկութիւն անձին լիովին գտանին ի սահմանագրութիւնս Ս. Եկեղեցւոյ, այլ զառաձեալ բնութիւնն և մոլորութիւն մտաց մարդկան նորանոր սխալանօք ի հարկի կացուցանեն զմեզ զառ ի նախնեաց հաստատեալսն առաւել եւս հաստատել և տարբացուցանել ի սիրտս մանկանց Եկեղեցւոյ, Առ այս պէտք են հոգեւոր հովուաց և վարդապետաց և ամենեցուն ուսումնասէր հաւատացելոց յարժամ ընթերցմամբ աստուածեղէն Գրոյն՝ զվկայութիւնս բաղդատել և զվարդապետութիւնս Եկեղեցւոյ նորօք հաստատել, եւ զնորանոր առարկութիւնս նորանոր վկայութեամբք ջրել, Ահաւա-

սիկ այլ եւս ճանրակչիւն և յոյժ օգտակար պաշտօն զոր Համարարբառն և եթ կարէ ճոխութեամբ իւրով լիտովն մատուցանել:

Թող զանհաս խորհրդոցն յայտնութիւն և զոր ինչ մինչեւ ցայս վայր ասացաքս: Աստուածաշունչն է գանձ լայնածաւալ բարոյական խրատուց և իմաստալից խօսից, որք յամենայն պարագայս կենաց ի պէտս զան վարդապետաց և խրատատուաց առ հասարակ ի հրահանգս մեծաց և փոքունց, եթէ միայն կարող լինիցի հրահանգիչն յիւրաքանչիւր դէպս ըստ պատշաճի յարմարաբար ընտրել զօգտակարն եւ զպիտանին: Այլ քանզի սահման յիշողութեան մարդոյ շնորհն նմա զայսքան անթիւ լանս Ս. Գրոց ի մտի պահել, եւ բաղում այն է զի կամ բողբոջիւն ի մտացօնս արկեալ՝ ջնջեալ է ի մտաց իւրոց զբանն որում պէտս ունէր, կամ սուղ ինչ և եթ ի բանիցն ի յիշողութեան անդ մնացեալ՝ զգիրս կամ զգլուխ և տունն յորում գտանի՝ չկարէ այլ եւս յուշ ածել, յայսպիսի դէպս, ասեմ, Համարարբառն փութացեալ զայ յօգնութիւն և բառնայ զճանձիր և զբռն ծանրութեան ի մտաց նոցա և իրբեւ ի պատկերի ընծայէ առաջի նորա զամենայն զբազմզան առածս և զբարոյական խօսս որով մարթանայցէ ընթերցողն զյարմարագոյնն և զճահաւորն յառանձին պէտս իւր ընտրել և ի վար արկանել:

Ոչինչ նուազ օգտակար և պիտանի լինի Համարարբառն այնոցիկ որք զգիրս նախնի Ս. Հարց ընթեանուցուն և զիմաստս նոցա որպէս և զարժիցն և զհոգեւոր երգոցն յառաջին դարուց անտի ի մեղ հասելոց՝ Հետազօտութեամբ քննել և ստուգել սովոր են: Որպէս ի վերոյ ակնարկեցաւ, Աստուածաշունչ մատենան ի սկզբանէ չունէր ներկայ բաժանումն զլիտց և տանց, այլ սոսկ ընդհանուր վերնագրաւ զլիաւոր բաժանմանց (որպէս Ծնունդք) ելք: Մատթէոս և այլն) որոշէին այլ և այլ գիրք ի միմանց, Մերս զլիակարգութիւն որպէս ասացաք, ի մէջ վեշտասաներորդ դարու հնարեցաւ ի գիւրութիւն, նախնիք այնպիսի եռանդեամբ և կատարելութեամբ զՍ. Գիրս ուսանէին մինչ չլինել ինչ պէտք այսպիսի դիւրացուցիչ բաժանմանց. բազումք ի նոցանէ զգլխաւոր մատենան ի բերան ուսանէին, և յորժամ հարկ լինէր բան ինչ ի Ս. Գրոց յառաջ բերել, սոսկ զանուն գրոցն յիշատակելով թէ օրինակի վասն այսպէս ասէ Մատթէոս կամ Պօղոս կամ Գաւթի, շատանային եւ ապա զբանն ի մէջ բերէին: Այլք՝ զանուամբ գրոցն իսկ զանց արարեալ գրէին, այսպէս ասեն Գիրք սուրբք, 2իք ինչ տարակոյս զի ուսումնասէրք մատենագրութեանց նախնեաց և եկեղեցական մատենից մեծպէս օգտեցին ի Համարարբառէս ի ստուգութիւն աստուա-

ծերէն բանիցն ի մէջ բերելոց թէ ուստի և յինչ միտս առեալ, և առանձինն դիւրացուցիչ ծառայութիւն կարէ նա մատուցանել մեզ՝ մանաւանդ որդւոցս այժմեան դարու: որք մեղմացուցեալ զնախնեացն ջերմեռանդ բարեպաշտութիւնս, յաւետ հոգօք աշխարհականօք պատաղիմք, և Համարձակիմք հանգոյն նոցին զմեծագոյն մասն ժամանակի մերոյ յուսումն և ի քննութիւն աստուածեղէն Գրոց նուրբի:

Բաւ համարեցի թուումն զլիաւոր և ընդհանուր պիտանութեանցս Համարարբառի իրբեւ սատարչի և օժանդակի ուսման հաւատոյ և կրօնի: Բայց Համարարբառ հայկական Աստուածաշնչի ունի զիւրն օգտակարութիւն և նմա միայն սեփական կարեւորութիւնս որով հանդիսանայ իրբեւ մին ի կարեւորագոյն մատենից ամենայն հայագիտի եւ ուսանողի հայ բարբառոյս:

Հայկական Աստուածաշունչն՝ իրբեւ առաջին և քան զամենայն քաջընտիր երկ ոսկեգարեան մատենագրութեան Ազգիս՝ անկասկած վկայ և առաջնորդ վարկանելի է այլ և այլ յատկութեանց գրոց լեզուի: Այժմեան դարու վեհագոյն քերթողըն հայկեան լեզուիս, Հ. Արսէն Բագրատունի, ի քերականութեան իւրում այսպիսի վկայութիւն դնէ զմերոյս Աստուածաշունչ Գրոց. «Թէպէտեւ թարգմանութիւն է Աստուածաշունչն, սակայն հարազատութիւն հայերէն խօսից գրեթէ քան յամենայն գիրս ի նմա փայլէ, որ և ըստ մեծի մասին ծնունդ է սկեղէն գրչի մեծին Սահակայ վեհագոյն վարժապետի ճարտարաց ժամանակին» 1:

1. Ոչինչ նուազ եռանդեամբ վկայէ զայսմանէ եւ Հ. Գար. Վ. Ջարբանաւեան ի Մատենագրաբան Հայ բարբառագրութեան կողմեցաւ զիս իւր. զորոյ զառաջիկայ հատուածն արժանի համարեցաք յառաջ բերել յօգտու եւ դիւրութիւն վերծանելուցս. Ամեն ժամանակակից եւ կրտսերագոյն պատմիչք այս ամեն գործոյն եւ ծառայութեան (այսինքն Ս. Գրոց թարգմանութեան) ըզվանդակ արդիւնքն կուտան թարգմանչաց, եւ մանաւանդ իրենց մեծ եւ ըզմանուչակ վարդապետաց՝ Սահակայ եւ Մեսրոպայ: Ասոնց անուանք, — որչափ հասեր է առ մեզ ի պատմութեանց եւ ի յիշատակարանաց —, իրենց սրբասուն եւ աստուածաբանոց վարք եւ հայկական մատենագրութեան մատուցած ծառայութիւն և արգասիք արդէն ծանօթ են մեզ: Ուստի առանց յերկարելու ի բանս անոնց անկարօտ գովութեան, փութանք իրենց ծննդով մեզի ընծայուած թարգմանութեանց վերայ արժանել մեր ընթերցողաց մտադրութիւնն: Այդ նոգեռանդ սրտից եւ աստուածապարգեւ վարդապետաց մեզի ասանդած ըզմանութիւն եւ ըզմատեսակ ու իրաւամբք իմաստնոյն ծերուայ զարմանցն ու նախանձը յաճախող վաստակոց մէջ՝ ինչպէս պարունակութեամբն՝ ասանկ ալ լեզուի արուեստովն, թարգմանութեան հաւատարմութեամբ, զեղովն ու վայելութեամբ նախամեծար պէտք է սնուրին Աստ-

2իք ինչ տարակոյտ զի որք զհայ լեզուս հըմ-
տութեամբ և կատարելութեամբ ուսանել բաղձանս
պարտին և զհայկական Աստուածաշունչն գէթ իր-
բու հնազոյն և ընտիր մատենագիր՝ ուշի ուշով
քննել և ուսումնասիրել, զհարազատութիւն ոճոյ
և դարձուածոց լեզուիս ի նմանէ ստուգել և այնու
հաստատել, և ի կազմութեան նորանոր խօսից՝ ուղ-
ղութեան և օրինացն որք ի նմա տեսնին՝ հետեող
լինել: Աւտօի որքան կարեւոր և պիտանի ցուցաք
Համարարբառս վասն ուսանողաց Ս. Գրոց ի կրօնա-
կան պէտս և սակա աստուածեղէն յայնութեանցն
ի նմա աւանդելոց, նոյնքան պիտանի և սատարիչ
վարկանելի է այնոցիկ որ զԻրն ուսանիցեն յաղա-
գրս յստակութեան և հարազատութեան լեզուին.
նշանակութիւնք բառից և կիրառութիւն նոցին
նօյնիւրք իսկ բաղդատութեան օրինօքն հաստատեալ
ճշդին, որովք, որպէս ցուցաք ի վերոյ, աստուա-
ծարանական մեկնութիւնք և վարդապետական բա-
րոյական իմաստք այլովքն հանգերձ լուսարանու-
թեամբ իրերաց պարզին, նոյնպէս այսու ձեռնտու-
ութեամբ քերականական համաձայնութիւնք որոշին,
այլ և այլ կիրառութիւն յատուկ անուանց և օտար
բառից և օրէնք տառադարձութեան նոցին սահմա-
նին, Չայս ամենայն և առուել քան զայս կարէ
գործել հայկական Համարարբառս:

Սմին իրի յարմար և կատարեալ Համարարբառ
օգտակար և զրեա թէ անհրաժեշտ իսկ է ամենայն
դասու հոգեւորականաց, մանաւանդ քարոզչաց և
դաստիարակաց, ծնողաց և խնամակալաց, ուսուց-
չաց և ուսանողաց Ս. Գրոց և հայկական լեզուիս
և ընդհանրապէս ամենայն քրիստոնէի որ փոյթ
յանձին կալեալ՝ զմիտս և զրօմեացեալութիւն աստ-
ուածային Գրոյն քաջիկ իմն իմանալ և ուսանել
փափագի և ի նոյն հասանել գուն գործիցէ:

ԹՈՐՈՍ Տ. ՆՍԱՆԱՆՆԸՆ ԶՈՂՈՒՅՑՆԵՐ

Ղարժապետ աստուածարանութեան.

ուածաշունչ Գրոց հրաշմառ Թարգմանութիւն, զոր առանց
շարժապետութեան կրօնաց հայկական հին և նոր Թարգ-
մանութեանց անզուգական և ամենաշտտիր երեխայից
սեպել, մեր գաղանութեան ամենէն գերազանց երկասի-
րութիւն, և անոր վերայ աշխատողներուն զլուի գործոց
և անմահական պարծանք: ԵՂ 38:

Ի նոյն միտս գրէ և Մ. Գարագաշեան. «Չեզրէն
Թարգմանութեան գրոյն այշապ ինչ լեզի ասել թէ զբօ-
րինակ հմուտքն և ձեռնասց յերոպագի քննչաց իսկ կոչե-
ցին զԹարգմանութիւն մեր «Թարգոն Թարգմանութեանց»
վասն ճշդութեան և հմտութեան. նոյնպէս պարտ և պատ-
շ՝ է վասն յատուկեան և գեղեցկութեան լեզուին ան-
ուանել զնա զլուի և պսակ դարձութեան հայ լեզուի: (Տա-
լակ ոսկեղէն գրքոտրեան, Թ. տարի. ԵՂ 54):

ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ.

ԱՆՔՈՒՅԿ ԵՎԵՂԵՑԻ

— Փետրուարի 9-ին Աստիկանում տեղի ու-
նեցած ծիրանաւորների ժողովում Ա. Լևոն Ժ. Գ. ար-
այայտեց իւր դժգոհութիւնը Բողոքարից Գերդի-
նանդ իշխանի դէմ. ի պատասխանի պատի խօսքերին՝
ծիրանաւորներից մեկն յայտնեց, որ շատերը զեռ-
ևս սպասում են Ֆեւրդինան դի բանադրուել.
Լուսն միւնչ նա ipso facto (ինքն ըստ ինքեան,
իւր գործով իսկ) բանադրուած է և ոչ մի քահա-
նայ իրաւունք չունի նորան հաղորդութիւն տալու:

— Պատի ներկայացուցիչը Բողոքարիչում ծի-
րանաւոր Մոնինին շրջաբերական է հրա-
տարակել իշխան Բորիսի «կրկնամկրտութեան» դէմ
ուր ցաւ է յայտնում կատարած դէպքի մասին,
բայց յորդորում է իւր հօտին ազօթել Բողոքարից
համար:

— Իտալիոյ մէջ թեմերի և ծխերի բաժանու-
մը պատմական հնազոյն ժամանակներից ծաղկով
այժմ մեծամեծ անհաւասարութիւնների և անտե-
ղութիւնների պատճառ է: Իտալիայում կայ 117
թեմ և միջին թուով իւրաքանչիւրում 50,000
ժողովուրդ: Թեմերը շատ անհաւասար են բաժան-
ուած, այսպէս 98 թեմ կայ երեք նահանգում
գարձեալ 25 թեմ երեք նահանգում մինչ այլ չորս
նահանգ ունեն 14 և հինգ նահանգ ընդամենը երեք
թեմ: Հռոմի նահանգն ունի 28 թեմ, Պերուջիան
25, Վազերտան 16, Պեզարոն 14 և ին. միճակային ա-
ռաջնորդների եկամուտներն ևս շատ անհաւասար
են, մինչ Գերբարայի արքեպիսկոպոսութիւնը ունի
70,000 ֆրանկ եկամուտ, Սան-Պոմինգոյիք միայն
6000 ֆրանկ է:

Իտալիայում կան ընդամենը 20,465 ծխական
եկեղեցիք որոնց բաժանուումն ևս շատ անհաւասար
է, մինչ Վալտանիդետա քաղաքը մի ծուխ է կաղ-
մում իւր 30,480 ծխականներով, Արեցցոյում ամեն
մի ծուխ 536 ծխականներ ունի, Մերձաւորապէս
100 ծխեր կարելի է հաշուել իւրաքանչիւրում 100
ծխականներ, մինչ 152 այլ ծխեր ունին իւրաքանչիւ-
րում 11,000 ծխականից աւելի: Այս անհաւասար
բաժանումից ծագում է և եկեղեցականների արդ-
հօլութեան անհաւասարութիւն, Իտալական տէրու-
թիւնը տարեկան 2,800,000 ֆրանկ է տալիս, որ-
պէս զի քահանաների միջին ուժիկը գոնէ տարեկան
800 ֆրանկի հասնի, այսինքն 320 ոտուրու Ար-
դիւնքի նուազութեան հետեանքն է քահանայից
սակաւութիւնը, որովհետեւ բարձր և միջին դաս-
կարգերի անտարբերութեան շնորհիւ քահանայա-